

## ՆԻՆԱ ԿՈՒՑԱՆՅԱՆ

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի  
իրավունքի և քաղաքականության ինստիտուտի  
քաղաքացիական և քաղաքացիական դատավարության  
իրավունքի ամբիոնի ասպիրանտ



### ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Գիտական հոդվածում բավարար մանրամասնությամբ քննարկվում են ՀՀ օրենսդրությամբ ըստ օրենքի ժառանգման իրավական կարգավորման հիմնախնդիրները: Բոլոր երկրներում, այդ թվում և Հայաստանում, քաղաքացու մահվանից հետո նրան սեփականության իրավունքով պատկանող գույքի հետագա ճակատագիրն ունեցել է և ունի ինչպես անձնական, այնպես էլ հասարակական նշանակություն: Ժառանգման հարցերն ուղղակիորեն առնչվել են երկրի տնտեսական ու քաղաքական անվտանգության հետ, ուստի այն չի կարող դիտարկվել՝ բացառապես ժառանգատուի և ժառանգների նեղ անձնական շահերից ելնելով: Հիմնական օրինաչափությունը, որը բնութագրում է հիշյալ բնագավառը, **անձնական և հասարակական (մասնավոր և հանրային) շահերի մշտական պայքարն է:** Մասնավոր և հանրային շահերի հարաբերակցությունը ժամանակ առ ժամանակ փոխվում է՝ ելնելով տվյալ ժամանակաշրջանի քաղաքական-պետական, իրավագաղափարական, արժեքաբանական գործոններով: Այդ ամենն իր արտացոլումն է ստանում օրենսդրությամբ, որն էլ ուղղակիորեն տպավորություն է հաղորդում առկա և հետագա զարգացումների մասին:

Հեղինակը եկել է այն եզրահանգման, որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսվող՝ ըստ օրենքի ժառանգների հերթերը կազմված են շատ դեպքերում առանց հաշվի առնելու հայ ժառանգման իրավունքի պատմության, ինչպես նաև բնական իրավունքի դասերը: Դրանից ելնելով՝ հեղինակն առաջարկում է օրենսդրության հետագա կատարելագործման ընթացքում հաշվի առնել այդպիսիք, ինչը որակապես նոր մակարդակի կբարձրացնի ժառանգման իրավունքի իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում:

*Հիմնարար քառեր - մասնավոր և հանրային շահեր, ժառանգման իրավունք, ժառանգների շրջանակ, ժառանգման հարցեր, ժառանգման հերթեր, կտակ:*

Բոլոր երկրներում, այդ թվում և Հայաստանում, քաղաքացու մահվանից հետո նրան սեփականության իրավունքով պատկանող գույքի հետագա ճակատագիրն ունեցել է և ունի ինչպես անձնական, այնպես էլ հասարակական նշանակություն: Ժառանգման հարցերն ուղղակիորեն առնչվել են երկրի տնտեսական ու քաղաքական անվտանգության հետ, ուստի այն չի կարող դիտարկվել՝ բացառապես ժառանգատուի և ժառանգների նեղ անձնական շահերից ելնելով: Հիմնական օրինաչափությունը, որը բնութագրում է հիշյալ բնագավառը, **անձնական և հասարակական (մասնավոր և հանրային) շահերի մշտական պայքարն է:** Մասնավոր և հանրային շահերի հարաբերակցությունը ժամանակ առ ժամանակ փոխվում է՝ ելնելով տվյալ ժամանակաշրջանի քաղաքական-պետական, իրավագաղափարական, արժեքաբանական գործոններով: Այդ ամենն իր արտացոլումն է ստանում օրենսդրությամբ, որն էլ ուղղակիորեն տպավորություն է հաղորդում առկա և հետագա զարգացումների մասին:

ՀՀ օրենսդրությամբ ժառանգման իրավունքի բնագավառում անձնական և հասարակական շահերի բախումը դրսևորվում է մի շարք ուղղու-

թյուններով, որոնցից մենք կփորձենք անդրադառնալ ըստ օրենքի ժառանգմանը, իսկ ավելի կոնկրետ՝ թե **ըստ օրենքի ժառանգման դեպքում ի՞նչ շրջանակով պետք է սահմանափակվի ժառանգների կազմը:**

Ըստ օրենքի ժառանգման հարաբերություններում թերևս ամենասուր հարցադրումը կապված է այն հանգամանքի հետ, թե ինչն է հիմք ընդունվում ժառանգների շրջանակը սահմանելիս: Ըստ կտակի ժառանգման պարագայում շատ հեշտ է հարցը լուծվում: Ըստ կտակի ժառանգների շրջանակը որոշվում է կտակարարի սուբյեկտիվ ցանկությամբ: Ըստ օրենքի ժառանգման դեպքում օրենսդիրը պետք է ելնի հստակ սահմանվող չափանիշներից, որպեսզի դրանով չտուժեն ինչպես պատմական տրադիցիաները, այնպես էլ ներկա սոցիալ-բարոյական համակարգն ու տնտեսական շրջանառությունը:

Ըստ օրենքի ժառանգների շրջանակը որոշվում է հետևյալ իրավաբանական փաստերով.

- ժառանգատուի հետ ունեցած ազգակցական կապով՝ մինչև որոշակի աստիճանը,
- ժառանգատուի հետ ամուսնության մեջ գտնվելը,

- ժառանգատուին որդեգրած լինելու հանգամանքը,

- ժառանգատուի կողմից որդեգրված լինելու հանգամանքը,

- ժառանգատուի խնամքի տակ գտնվելը,

- ժառանգատուի և ժառանգորդի միջև օրենքով նախատեսվող հատկանիշների առկայությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է ըստ օրենքի ժառանգների չորս հերթեր: Համաձայն ՀՀ քաղ.օր. 1216-1219-րդ հոդվածների՝

- Առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:

- Երկրորդ հերթի ժառանգներն են ժառանգատուի հարազատ, ինչպես նաև համահայր կամ համամայր եղբայրները և հարազատ քույրերը: Ժառանգատուի եղբայրների և քույրերի երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:

- Երրորդ հերթի ժառանգներն են ժառանգատուի ինչպես հայրական, այնպես էլ մայրական կողմի պապը և տատը:

- Չորրորդ հերթի ժառանգներն են ժառանգատուի ծնողների եղբայրները և քույրերը (հորեղբայրները, հորաքույրերը, քեռիները, մորաքույրերը): Վերջիններիս երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղ.օր. 1120-րդ հոդվածի համաձայն՝ ըստ օրենքի ժառանգների թվին են պատկանում այն անաշխատունակ անձինք, ովքեր մինչև ժառանգատուի մահը առնվազն մեկ տարի գտնվել են նրա խնամքի ներքո: Ըստ օրենքի այլ ժառանգների առկայության դեպքում նրանք ժառանգում են այն հերթի ժառանգների հետ միասին, ովքեր ժառանգության են հրավիրվում:

Համեմատության համար նշենք, որ ՀՍՍՀ 1964թ. քաղաքացիական օրենսգրքով սահմանվում էին ժառանգման երկու հերթեր, որոնք նախատեսում էին ժառանգների ավելի սահմանափակ շրջանակ, քան այդ նախատեսված է ՀՀ գործող օրենսգրքով: Որքան շատ են ժառանգման հերթերը, այնքան պետությունը մեծացնում է մասնավոր անձանց շահները՝ ժառանգելու իրենց ազգականի անձնական գույքը: Նման վարքագիծը վկայում է ժառանգման իրավունքի բնագավառում պետության կողմից տարվող՝ նախապատվորեն մասնավոր-իրավական կարգավորման քաղաքականության մասին: Արտաքուստ առաջընթացն ակնհայտ է: Սակայն, քննարկելով ժառանգման հերթերը և համեմատականներ անցկացնելով այլ երկրների օրենսդրական կարգավորումների հետ, մեզ համար առաջընթացն արդեն լիովին անվիճարկելի չի թվում: Թեև պրոֆ. Գ.Հ.Ղարախանյանը նշում է, որ.

«Հակառակը ընդարձակվել է ժառանգների շրջանակը, և դրանով օրենսդիրը հետապնդում է որոշակի նպատակ, քաղաքացու ունեցվածքը նրա մահվանից հետո պետք է մնա նրա մերձավոր ազգականներին, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ այլ ազգականներին»<sup>1</sup>, մենք այդ լավատեսությունը չենք կիսում: Պետությունն ըստ օրենքի ժառանգման հարցում դեմքով շրջված է ավելի շուտ դեպի հանրությունը, քան թե առանձին անհատը, որի հանդեպ պատրաստ չէ լրիվ գնալ զիջումների և թույլ տալ, որ քաղաքացու գույքը ժառանգության կարգով բաժին հասնի նրա մերձավոր կամ այլ ազգականներին: Սա նաև բավական լուրջ բարոյահոգեբանական նշանակություն ունեցող հարց է: Հասարակության անդամների զիտակցության մեջ շարունակում է նստած մնալ հանրային սուբյեկտի կողմից անընդհատ ճնշումների ենթարկվելու ներքին բարդույթը. դա անդրադառնում է հասարակության մեջ քաղաքացիների ինդիվիդուալիստական ազատ զարգացման վրա: Համեմատության համար նշենք, որ ԱՊՀ մի շարք երկրներ սահմանել են այնպիսի մեխանիզմներ, որոնց պայմաններում անհամեմատ մեծ է հավանականությունը, որ քաղաքացու գույքը ժառանգության կարգով իսկապես կհասնի իր մերձավորներին ու հարազատներին:

**Առաջին հերթի** ժառանգների հետ կապված՝ պետք է նշել հետևյալ հիմնախնդիրները: Առաջին հերթի ժառանգ են համարվում ժառանգատուի երեխաները (heredes recti – прямые наследники): Համաձայն Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ «...երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով գործունակություն է ձեռք բերում կամ գործունակ է ճանաչվում ավելի վաղ»: Ստացվում է, որ ժառանգատուի զավակները, որոնց 18 տարին լրացել է, և այլևս «երեխա» չեն համարվում, գրկվում են ժառանգման իրավունքից: Այստեղ կոպիտ կերպով սահմանափակվել է ՀՀ քաղաքացիների իրավունակությունը: Համաձայն ՀՀ քաղ.օր. 21-րդ հոդվածի՝ «...քաղաքացիների իրավունակության բովանդակությամբ ներառվում է նաև ժառանգելու իրավունքը»: Չենք կարծում, որ օրենսդիրը հետապնդել է քաղաքացիների իրավունակությունը սահմանափակելու նպատակ: Դա պետք է համարել օրենսդրական անփութության հետևանք, որն անհրաժեշտ է շուտափույթ շտկել: Հայկ. ՍՍՀ 1964թ. քաղաքացիական օրենսգրքի 535-րդ հոդվածով օգտագործվում էր «զավակ» տերմինը, որի պարագայում որևէ մեկն ինդիք առաջ չէր գալիս: ՀՀ գործող քաղաքացիական օրենսգրքում անհրաժեշտ է վերադառնալ հենց այդ տերմինին և նշել, որ առաջին հերթի ժառանգ պետք է համարվեն ոչ թե «ժառանգատուի

երեխաները», այլ՝ «ժառանգատուի զավակները»:

Առաջին հերթի ժառանգ են համարվում ժառանգատուի թոռները՝ ներկայացման իրավունքով (право представления): «Ներկայացման» տակ նկատի է առնվում այն դեպքը, երբ մինչև ժառանգությունը բացվելը մահանում է ժառանգը, ապա նրան հասանելիք բաժինն անցնում է իր զավակներին: Ստացվում է, որ ուղիղ վայրընթաց ազգականների շրջանակը սահմանափակվում է միայն թոռներով: Իսկ ծոռները, ծռանգները և վայրընթաց մյուս ազգականներն արդեն ժառանգման իրավունքի շրջանակներից դուրս են: Այստեղ արդեն չէ օրենսդիրը դրել է լուրջ սահմանափակումներ:

Համեմատության համար նշենք, որ ԱՊՀ մի շարք երկրներ, միաժամանակ հիմք ընդունելով ԱՊՀ մոդելային քաղաքացիական օրենսգիրքը<sup>4</sup>, վայրընթաց ազգականների շրջան չեն սահմանափակում: Օրինակ, ՌԴ քաղ.օր. 1142-րդ հոդվածը ներկայացման իրավունքով ժառանգման է հրավիրում «ժառանգատուի թոռներին և նրանց սերունդներին»: Ժառանգման իրավունքի պատմության մեջ, որպես կանոն, սահմանափակվել է վերընթաց կամ կողմնային ազգականների ներկայացման իրավունքը: Վայրընթաց ազգականների ներկայացման իրավունքը որպես կանոն չի սահմանափակվում, և համարվում է, որ նման մոտեցումը բխում է հենց բնական իրավունքից<sup>5</sup>: Ինչպես գրում է Ի.Ա.Պոկրովսկին, վայրընթաց ազգականների ժառանգման իրավունքները չի կարելի սահմանափակել, քանի որ ծնողները պետք է հոգեպես հանգիստ լինեն, որ այն, ինչ նրանք ստեղծում-արարում են, հաջորդաբար անցնելու է իրենց սերունդներին: Դա լրացուցիչ ստիմուլ է հաղորդում քաղաքացիներին: Նույնիսկ այն իրավագետները, որոնք դեմ են արտահայտվում ըստ օրենքի ժառանգմանն ընդհանրապես, այնուամենայնիվ, ընդունում են, որ ժառանգատուի գույքը պետք է անցնի նրա սերունդներին զոնե մինչև նրանց չափահաս դառնալը<sup>6</sup>: Ի.Ա.Պոկրովսկին վերընթաց ազգականների առումով նշում է, որ ծնողները, որոնք իրենց ամբողջ կյանքն են ներդրել սերունդների ապահովման համար, խորը ծերության հասակում նրանցից նաև նյութական օժանդակություն ստանալու իրավունք ունեն<sup>7</sup>: Վերընթաց ազգականներին սահմանափակել սերունդներից ժառանգություն ստանալու հարցում, նշանակում է խախտել նրանց բնական իրավունքը:

**Երկրորդ հերթի** ժառանգներ են համարվում ժառանգատուի եղբայրներն ու քույրերը (heredes remotiores - отдаленные наследники): Մինչև 2011 թ-ը չէ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում էր միայն հարազատ եղբայրներին և քույրերին, որի տակ նկատի էին առնվում միայն ընդհանուր ծնողներ ունեցող եղբայրներն ու քույրերը, իսկ համա-

մայր կամ համահայր եղբայրներն ու քույրերը դուրս էին մնացել ըստ օրենքի ժառանգների շրջանակից: Դա համարվում էր անհիմն սահմանափակում, որը շտկվեց միայն 2011թ-ին, երբ քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածում լրացվեց **«համահայր կամ համամայր եղբայրները և քույրերը»** արտահայտությունը:

Հարազատ, ինչպես նաև համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի վայրընթաց ազգականներից ներկայացման իրավունք է վերապահվել միայն նրանց երեխաներին:

**Չորրորդ հերթի** ժառանգներ են համարվում ժառանգատուի ծնողների եղբայրներն ու քույրերը: չէ օրենսդրությունն առաջին անգամ է նախատեսում կողքային ազգականների այս կատեգորիան: Այստեղ անհրաժեշտ է նկատել մի երևույթ, որն այդքան էլ օրինաչափ չէ ժառանգման իրավունքին ընդհանրապես: չէ օրենսդրությունը բավական սահմանափակումներ է դրել վայրընթաց ազգականների համար (ինչպես այդ տեսանք վերևում), սակայն, միևնույն ժամանակ, նախատեսել է կողքային ժառանգների երկրորդ կատեգորիան, ընդ որում՝ բավական լայն շրջանակով: Դա անհամեմատ ընդլայնում է կողքային այս ժառանգների շրջանակը, ինչը բավական լուրջ ռեզոնանս է առաջ բերում հայ ժառանգման իրավունքում, երբ կողքային ժառանգների շրջանակն ավելի նախապատվելի դիրքերում է հայտնվում, քան վայրընթաց ժառանգների շրջանակը:

Ինչպես նկատում ենք, չէ օրենսդրությամբ նախատեսվող ըստ օրենքի ժառանգների հերթերը կազմված են՝ շատ դեպքերում առանց հաշվի առնելու հայ ժառանգման իրավունքի պատմության, ինչպես նաև բնական իրավունքի դասերը:

Մեր գնահատմամբ՝ ըստ օրենքի ժառանգման ուղղությամբ չէ քաղաքացիական օրենսդրությունն ունի բավական լուրջ թերություններ, որոնց վրա հարկ է հրավիրել չէ օրենսդրի ուշադրությունը՝ օրենսդրության հետագա կատարելագործման ընթացքում այդպիսիք հաշվի առնելու նպատակով:

- <sup>1</sup> Տե՛ս Բարսեղյան Ս.Կ., Գարախանյան Գ.Հ., Հայկյանց Ա.Ս., Քաղաքացիական իրավունք. Երրորդ մաս. Ե. ԵՊՀ իրատ. 2003. էջ 278:
- <sup>2</sup> Տե՛ս Римское частное право: Учебник /под ред. Новицкого И.Б. и Перетерского И.С./ М. Юриспруденция. 1999. С. 220; Мананников О.М. Наследственное право России. Учебное пособие. М. Дашко и К. 2004. С. 137.
- <sup>3</sup> Տե՛ս Բարսեղյան Ս.Կ., Գարախանյան Գ.Հ., Հայկյանց Ա.Ս. Քաղաքացիական իրավունք. Երրորդ մաս. Ե. ԵՊՀ իրատ. 2003. էջ 273:
- <sup>4</sup> Տե՛ս Гражданский кодекс. Часть третья. Модель. С. 65. //Приложение к “Информационному бюллетеню”, 1996. N 10.
- <sup>5</sup> Տե՛ս Владимирский-Буданов М.Ф. Обзор истории русского права. Ростов н/Д. Феникс. 1995. С. 460-461; Гражданское и торговое право капиталистических стран /под ред. Генкина Н.М./, Госиздат. Юрид. Литературы. М. 1949. С. 517-521; Ростовцева Н.В. Тенденции развития норм о наследовании в гражданских кодексах Франции и России // Законодательство. 2005. N 7. С. 18-27.
- <sup>6</sup> Տե՛ս Покровский И.А. Основные проблемы гражданского права. СТАТУТ. М. 1998. С. 305.
- <sup>7</sup> Տե՛ս Покровский И.А. Основные проблемы гражданского права. С. 306.

**Нина Купцян**

Аспирант кафедры гражданского права  
и гражданско-процессуального права института права и политики  
Российско-Армянского (Славянского) университета

#### РЕЗЮМЕ

##### *Некоторые аспекты проблемы правового регулирования наследования по закону*

В научной статье обсуждаются проблемы правового регулирования наследования по закону в РА. Во всех странах, в том числе и в Армении, оставшаяся после смерти гражданина правовая судьба собственности имела и имеет не только личное, но и общественное значение. Наследственные отношения тесно связаны с экономической и политической безопасностью страны, именно поэтому эти отношения не могут рассматриваться как сугубо личные правовые интересы наследников. Основная закономерность, характеризующая эту область - это постоянная борьба личных и общественных (частных и публичных) интересов. Соотношение частных и публичных интересов время от времени меняется под воздействием политико-государственных, юридико-идеологических, ценностных факторов. Эта закономерность получает свое отражение в законодательстве, которая в прямую создает впечатление о ходе настоящих и дальнейших развитии в стране.

Автор пришел к выводу, что предусмотренные законодательством РА очереди наследников по закону были составлены без соответствующего внимания на национально-историческое развитие и требования естественного права. Исходя из этого автор предлагает в ходе дальнейшего развития законодательства учитывать намеченные аспекты, в результате которого правовое регулирование наследственных отношений в РА поднимется на качественно новый уровень.

**Ключевые слова:** частные и публичные интересы, право наследования, круг наследников, вопросы наследования, линия наследования, завещание.

**Nina Kutsanyan**

PHD student in Civil Rights of Russian- Armenian Slavonic University

#### SUMMARY

##### *Some problems of legal settlement by law inheritance*

In the scientific article deeply enough are discussed the problems of legal regulation of inheritance under the law in RA. In all countries, as well as in Armenia, the further destiny of the property belonging to the citizen after his death had and has not only personal, but also a public value. Hereditary relations are directly connected with economic and political safety of the country, for this reason they cannot be observed from the point of view of the personal interests of successors. The basic regularity, which characterizes the mentioned sphere, is the constant struggle between personal and public (private and public) interests. The parity of private and public interests changes from time to time under the influence of political-state, legal-ideological, valuable factors. All this finds its reflection in legislations which in a straight line make impression about the present and further development.

The author has come to a conclusion that the turns of successors provided by legislation of RA under the law were formed without corresponding attention on national-historical development and requirements of the natural right. Based on this, the author suggests during the further development of the legislation to take into consideration those, in the result of which the regulation will rise to qualitatively new level the legal regulation of hereditary relations in the Republic of Armenia.

**Keywords:** private and public interests, inheritance rights, circle of heirs, inheritance questions, line of inheritance, will.